

9314

331.91

4-45

1921

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԱ Ե. ԱԿՐԵԼԻ

Պողիացամբ բար եւկըների—միացե՛ք

Վ. ԿԵՐԺԵՆՑԵՎ

ՄԱՅԻՍԻ 1-Ը

Եկ

1006  
29522

ՀԱՄԱՅՆՄԱՐԿԱՅԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐՁՐ. ԽԻՉՈՐԻ

ZRUS.  
ԳՐՈՒՑՈՒՄԸ ԱՎԱՐԱՐ

1921  
ԹԻՖԼԻՍ

ՅԱՅԼԻՋՈՒՅԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱ

ПОД РЕДАКЦИЕЙ Е. СУРЕНА

Боролстарии всех стран—содиняйтесь

Վ. ԿԵՐԺԵՆՑԵՎ

1-ое Мая и

2001

Мировая Революция

Перевод Хикара

Изд.  
Груцентропечать

1921  
Թիֆլիս

1. Մայիսի 1-ն իրեն միջազգային համերաշխորհան տօն

Տասնեակ տարիներից ի վեր Մայիսի մէկը բանւորական տօն է համարւում: Դա մի օր է, երբ տեղի են ունենում ցոյցեր, զօրքի և ոստիկանութեան հետընդհարաւմներ, աշխատանքի յաղթական երթը ընդդէմ նրա ձնշղների:

Առաջին անդամ էս տօնը կազմակերպեցին Միացեալ Նահանգների բանւորները 1886 թւին: Նրանք կազմակերպւած փողոց ելան և ուժժամեաց բանւորական օրւայ պահանջ դրին: Բայց էս առաջին տօնը սգով վերջացաւ, Կապիտալիստները ցոյցի հետեանքներից վախենալով, անդէն բանւորութեան դէմ զօրք դուրս բերին և տեղի ունեցած ընդհարթւմից մի քանի տասնեակ մարդիկ վիրաւորւեցին ու սպանւեցին:

Սակայն բուրժուազիայի թունալից վրէմը զրանով չապաււեց: Բանւորական շարժման ղեկավարները ձերբակալւեցին, դատի ենթարկեցին և տաժանակիր աշխատանքների մատանւեցին: Աւթ հոգի մահւան դատապարտեցին: Ամերիկայի բուրժուազիան կարծես մէկն նախազգաց, թէ որքան վտանգաւոր է սկսւած բանւորական շարժումը: Նա պրոլետարիատից վախում էր ոչ թէ միայն էն ժամանակ՝ երբ վերջինս նրա դէմ կուելու համար բաց դաշտ էր դուրս դալի, այլ նաև էն ժամանակ՝ երբ նա իր տօներն էր կատարում: Նա տեսնում էր, որ էղ տօներն ել խթան են հանդիսանում բանւորութիւնը ի մի ձուլելու, պրոլետարիատի վիճակը բարտքելու և կապիտալիզմը տապալելու համար:

1889 թ. Փարիզում, Բանւորական Միջազգային Ընկերութիւն վերակազմնեց ու այլպիսով Անսահմանացիոնալի հիմքը գրւեց: Տարբեր երկրների բանւորական կազմակերպութիւնների ներկայացուցիչները նորից իրար ձեռք մեկնեցին և որովհարիատի միջազգային միութիւն կազմեցին:

Փարիզի կոնգրեսը 1889 թւին որոշեց ամենուրէք Մայիսի 1-ը դարձնել պրոլետարական տօն՝ երբ բանւորական մասսաները պէտք է ցուցադրին իրենց համերաշխութիւնն ու նպատակների միակերպութիւնը: Մայիսի մէկին առանց ազգի խարութեան բալոր բանւորները համաշխարհային բնոյթ կրող լողունզներով փողոց պէտք է գուրս կային: Էղ օրը թէ Գիրմանիացի, թէ Անգլիայի, թէ Ռուսաստանի, թէ Ամերիկայի, թէ Ճապոնիայի և թէ Ֆրանսիայի բանւորները պէտք է համակեն ընդհանուր մի զդացմունքով, որը կերպարականութեան նման մէկն պիտի անցնի բոլորի սրագ:

Վերջին երեսուն տարւայ ընթացքում, Մայիսի մէկը միշտ սարսափեցրել է կապիտալիստական աշխարհը: Բուրժուազիան միշտ վախեցել է էն բանից, որ չը լինի թէ բանւորական ցոյցերը իրենց ամրող ծանրութիւնով փլւին իր վրայ: Իսկ պրոլետարիան էղ օրը իր ոյժերն է համախմբել և հաշւելը նու վատան քայլերով առաջ է դիմել դէպի էղ կուի տօնը հաւատացած լինելով, որ վիրջնական յաղթանակն իրենն է:

Մայիսի մէկի նախօրեակին բուրժուական մամուլը միշտ սկսել է աղմուկ բարձրացնել: Առոտիկանութիւնը կամ սկսում էր բանւորական շարժման աչքի ընկնող զործիչներին ձերբակալել և կոմունակայն դէպու գաղանի արգելութիւնը կազմական միջազգային միութիւն էր կազ-

մակերպել: Նախազգուշացնող բուրժուանիքը բանուարկան շրջաններից թագուառում և շատ անդամ էլ մհծ քաղաքներից հեռանում էին: Կառավարութիւնը «կարգը խանդարողների» գէմ իրաւու հրահանգներ էր արձակում: Սոցիալիստների հասցէին սկսում էին տպագրւել բամբասանդներ ու կեղծիքներ: Բոլոր հաւատի քահանաները իրենց ծխականներին հրաւէր էին կարդում խաղաղ լինել և աստծու ու բուրժուազիայի կամքին խոնարհել:

Հենց էդ ժամանակ պրոլետարիատի շարքերում տեղի էր ունենում համերաշխատանք: Մայիսի մէկի տօնի առթիւ լոգունգներ էին մշակում, գաղտնի կամ ակնյայտ թուոցիկներ տալում, կարմիր դրոշակներ պատրաստում, պահանջներ ցուցադրում, տօնի ծրագիրը մշակում ու յայտարարում: Էս բոլորը կատարում էր տունց վախելու, որ տօնի օրը կարող էր զօրքի և ոստիկանութեան մէջ ընդհարում տեղի ունենալ:

Տօնակատարութիւնից յետոյ սարսափահար բուրժուազիան բանւորական ցոյցերի քանակն էր հաշում: Իսկ պրոլետարիատը հաջւի էր առնում իր կաղմակերպութիւնն ու չափում էր իր ոյժերը:

Երկրորդ ինտերնացիոնալը որոշեց Մայիս մէկը տօնել յանուն բանւորութեան միջազգային համերաշխութեան: Քրա համար էլ նա մի ընդհանուր լոգունդ մշակեց, մի լոգունդ, որը բոլոր երկրների բանւորների սրտին մօտ լինէր: Դա ութշամեայ բանւորական օրւայ պահանջն էր:

«Ութ ժամ աշխատանք, ութ ժամ հանդիսա, ութ ժամ քուն»-ահա էս տեսակ լոգունդ առաջադրեց Փարիզեան կոնքը:

Էն ժամանակ դեռ ոչ մի երկրում և ոչ մի հիմ-

նարկութեան մէջ ութ ժամեայ բանւորական օր գոյութիւն չունէր: Ամեն տեղ 10, 12, 14 և աւելի ժամեր էին աշխատում: Էս պատճառով էլ էդ պահանջը բոլորի սրտին մօտ ու հասկանալի էր: Նու կեանքի անտեսական ծանր պայմաններին էր վերաբերում, դրա համար էլ իր շուրջը համախմբեց բանւոր դասկարգի նաև յետամեաց մասը, որը «քաղաքականութիւնից» խորշում և «սոցիալիզմ» բարից վախում էր:

Էսպէս, ժամանակի ընթացքում ութժամեայ բանւորական օրը դարձաւ մի լսունդ, որը միացրեց ամբողջ աշխարհի բանւորներին: Ամենուրեք Մայիս մէկին նրանք նոյն պահանջով փողոց էին ենում և ցայտուն կերպով հանդէս բերում, որ իրենք գգում են տարրեր երկրների բանւորութեան համերաշխութեան վեհութիւնը ու գիտակցում, որ բոլոր պրոլետարները մի ընդհանուր սպատակ և մի նորս ունեն:

Հետզհետէ ութժամեայ բանւորական օր լոգունդն աւելացան նաև ուրիշները, որոնք ամենից առաջ միլիտարիզմի դէմ էին ուղղւած:

Բոլոր երկրներում բանակի և նաւատարմիզի անհրաժեշտ պէտքերի ու սպառազինման ծախսերն օրաւոր աւելանում և տուրքերն աճում էին: Զինուարականութիւնը գլուխ էր բարձրացրել: Բանւորութիւնը ստիպւած էր բուրժուազիայի հայրենիքը պաշապանելու համար իր կեանքը զոհարերել և կազարմայի աշխատանքներին ընտելանալ:

Այս պատճառով Մայիսի 1-ի լոգունգներին աւելացւեց նաև հետեւեալ պահանջը—«մշտական զօրքը փոխարինել ժողովրդի սպառազինումով կամ ժողովրդուկան միլիցիայով»: Էս հարւածն ուղղւած էր միլիտարիզմի դէմ: Բանւորութիւնն էւ լոգունգն առաջադ-

բելով շատ լաւ հասկանում էր, որ առհասարակ պատերազմները և մանաւանդ համաշխարհային պատերազմը պէտք է գլխաւորապէս պրոլետարիատի համար ծանր բեռ դասնան ու դրանով նպաստեն բուրժուազիային:

Բոլոր երկրներում տարածող միլիտարիզմի գէմ մզելիք կուիը յաջող ելք կունենայ միայն էն ժամանակ, երբ ամեն տեղ պրոլետարիատի սերտ միութիւնն առաջ կը գայ: Միլիտարիզմը հիմնում էր զանազան ազգութիւնների իրար գէմ թշրինամացնելու ու բաժան-բաժան անելու վրայ և բուրժուազիայի ուժեղունալուն զարկ էր տալիս: Պրոլետարիատը ցանկանում էր արհեստականորէն սերմանած էս թշնամանանքին հակազրել իր համերաշխութիւնը:

Բացի յիշւած երկու հիմնական լոկունգներից բանւորութիւնը Մայիսի 1-ին ցուցազրում էր նաև զուտ աելական ընոյթ կրող պահանջներ, որոնք տարեցտարի աւելի վճռական ու խիզախ էին զանում:

Մայիսի մէկի տօնը հենց իր սկզբնաւորութեան օրից բանւորների համար ոչ թէ խաղաղ ուրախութեան տօն է եղել, այլ յեղափոխական կուի: Եդ օրը պրոլետարիատը յիշում էր բանւորութեան ազատագրման համար ընկած առաջնորդողներին և տօնին գնում էր ինչպէս կուի դաշտ ելնող մի մարզ:

Մայիսի մէկին ընդհանուր գործադուլ էր յայտարարում: Բանւորները փողոց էին դուրս գալի: Շատ յաճախ էլ ցոյցերը զօրքի հետ ունեցած ընդհարումներով էին վերջանում:

Սոցիալիստների մէջ կային այնպիսիները, որոնք փորձում էին կուից խուսափել: Համաձայնութեամբ ինդիքները լուծել ցանկանալով, նրանք բուր-

ժումզիայի հետ հաշտելու ճանապարհ էին բռնում: Օրինակ նրանք առաջարկում էին, գործադուլների տեղիք չտալու համար, մայիսի 1-ի աօնակատարութիւնը, եթէ աշխատանքի օր է ընկնում, աօնել առաջիկայ կիրակի:

Բայց յեղափոխական պրոլետարիատը նման մտավախութեան ու տատանումների գէմ միշտ կուել է: 1891 թւին Բրիսուէլում կայացած միջազգային կոնգրէսը պնդեց, որ Մայիսի 1-ը դաստիարակային պայքարի օր է և որ զա պէտք է աօնի սնապատճառ էղ թւին և պէտք է էղ օրը տշխատանքները դադարեցնեն:

Ի՞նքը բուրժուազիան է աեղիք տեկ էդ տօնը գործնել անողոր պայքարի մի օր: Եւրոպայում տօնակատարութեան սկզբի տարիները (1890 և 1891) նշանաւոր են ամենախիստ ձնշումներով: Զօրքերը կրակ էին բաց անում խաղաղ ազգաբնակութեան վրայ: Քաղաքների փողոցներում բանւորութեան արիւնն էր հոսում:

Այսպէս Մայիսի 1-ը մինչև վերջին ժամանակները միշտ եղել է կուի մի օր, երբ ամբողջ աշխարհի կազմակերպւած միացած պրոլետարիատը իր ոյժը հակագրում էր միջաղդգայնորէն համախմբւած բուրժուազիային:

Մայիսի 1-ը միշտ սոցիալիզմի կարմիք տօնն է եղել:

2. Մայիսի մէկը նախ նաև համաշխարհային պատերազմը

Մինչև համաշխարհային պատերազմի սկիզբը Մայիսի մէկի տօնը միշտ բանւորների համար եղել է նրանց ազատագրութեան համար մզւող կուի յաջողու-

թիւն ու անյաջողութիւնը բնութագրող մի օր։ Ամբողջ քսան հինգ տարւայ լնթացքում նա սերտ կապ ունէր պրոլետարական բոլոր շարժումների հետ։ Երբ բանւորութիւնը ննդ զրաւթեան ու անկման շրջանն էր ապրում, տօնն էլ անգոյն և միացեալ ոյժերով չէր կատարուում։ Երբ յեղափոխական կոիւը վերսկսում էր՝ Մայիսի մէկն էլ զանուում էր պրոլետարիատի կողմից կապիտալիզմի դէմ մղած պատերազմի ամենացայտուն մոմենտներից մէկը։

Մայիսի մէկի աօնը գա մի չափանիշ էր, որով կարելի էր իմանալ, թէ ոլրոլետարիատը որքան ոյժ, յեղափոխական էներգիա ունի և որքան նա կազմակերպւած է։ Համաշխարհային բիրժան ամենայն ուշադրութեամբ հետեւու էր յեղափոխութեան էղ բարոմետրին Կառավարութիւնները, իրենց քաղաքականութիւնը վարելիս, միշտ ի նկատի էին ունենում բանւորութեան էղ ցոյցերը։

Մայիսի մէկը պատերազմից առաջ տարբեր երկրներում զանազան կերպ էր անցնուում։ Նայած թէ բանւորական շարժումը ինչ բնոյթ էր կրում և ինչ յաջողութիւններ ունէր, նոյնպէս էլ էղ տօնն էր կատարուում։

Անզիփայում, ուր երկաք ժամանակ արհեստակեցական միութիւններն (արէպ-ունիտներն) էին տօն տուող և ուր սոցիալիստական շարժումը գանգաղ էր զարգանում, Մայիսի մէկն էլ շատ յաճախ կիրակի օրերն էր տօնւում և այն էլ յաջողութիւն չէր ունենուում։ Անզիփական պրոլետարիատը շատ զանգաղ էր սոցիալիզմի համար մղուղ կուի զաշտ զուրութերում, միայն հետպէտէ, փոքր առ փոքր, նա ինքը զգաց, որ անհրաժեշտ է միւս երկրների բանւորութեան հետ սերտ կապ հաստատել։

Մայիս մէկի տօնը Գերմանիայում աւելի կազմակերպւած և աւելի սիրով էր կատարուում, հսկել Մայիսի մէկի հերթական լոգունգների ապահուած պրոպագանդայի վրայ առանձնակի ուշադրութիւն էին դարձնուում։

Ֆրանսիայում, իտալիայում, Ամերիկայում և ուշրից երկրներում Մայիսի մէկը բանւորների կազմակերպւած ցուցարարութեամբ աչքի էր ընկնուում։

Բուլուսկան բանւորական շարժման ընթացքում էղ տօնն առանձնայատուկ նշանակութիւն աւնէր։ Դա հանդէս էր զալիս իրենց յեղափոխական լոգունգներից մէկը, որի շուրջը պրոլետարիատի ոյժերը միապետութեան և կապիտալիզմի դէմ կուելու համար, համախմբւուում էին։

Դեռ 1891 թւին Բուլուսկան բանւորներն էլ մասնակից են լինուում պրոլետարիատի միջազգային էղ տօնին։ Անշուշտ էն ժամանակ շատ քիչ զիտակից պրոլետարներ կային։ Դրա համար էլ բանւորական շարժումը համեմատարար շատ թոյլ էր։ Տակաւին սոցիալգեմոկրատական կրւսակցութիւն գոյութիւն չունէր։ Մայիս մէկը տօնում էին միմիայն առևական յառաջադէմ պրոլետարիատի փոքրաթիւ ինքերը։

Բոլորումին այլ է լինուում 90-ական թւականների կէսին։ Գործազուլները սկսուում են տարածւել, գաղտնի կազմակերպութիւններ և միութիւններ են առաջ զալիս։ Մեծ թափով սոցիալիստական պրոպագանգան է մղուում, ուստի և Մայիս մէկը էս անգամ զանուում է աւելի լայն մասսաների լազմնուում։

XX-րդ դարի սկիզբն արդէն (1901) աչքի է ընկնուում Մայիսի մէկի առթիւ ամբողջ Բուլուսկանի զանազան մասերում տեղի ունեցած գործազուլներով։ Բայտ պաշտօնական տևեալների, որսնք անշուշտ շատ պակառաւոր են, գործադուլների թիւը 120-ի է հաս-

ում: Միմիայն Պետրովը գործադուլ էն արել-նմօտաւորապէս 15,000 մարդ: Ինկատի ունենալով ցա-րական ռեժիմի կորպերը, էղ քանակը պատկառելի պէտք է համարել:

Մօտենում է ուսուական տուաջին յեղափոխութիւ-նը: 1902 և մանաւանդ 1903 թւին արդէն մասսայա-կան գործադուլները սկսում են շատ աւելի մեծ թա-փով ծաւալւել: Իսկ նշանաւոր 1905 թւին՝ տուաջին ընդհանուր գործադուլը դառնում է մի զբանդիս շար-ժում: 1906 թ. Մայիսի մէկը, որ տեղի ունեցաւ յեղա-փոխութիւնից յետոյ, աչքի է ընկնում Ռուսաստանում մինչև էղ օրը չտեսնուած մանիքեստացիաներով, ցոյցերով, որոնք հանդէս բերին պրոլետարիատի մէջ գոյութիւն ունեցող սերտ կապն ու միութիւնը: Յա-ջորդ ապրին, չնայած որ ուշակցիոն արդէն սկսում էր, բայց և այնպէս Մայիսի մէկը նարից ցնցում է ամ-բողջ երկիրը:

Դրանից յետոյ սկսում է Սոսվիպինեան ուշակ-ցիան: Պրոլետարիատի կուսակցութիւնը քայլայման է մատնուում, նրա առաջնորդները սպանուում, աքսորուում, թափառուում և բանտարկութիւն են դատապարաւում: Ինահլիգենցիայի շրջանում սկսում է զարգանալ յու-ստալուումը, ուրացուումը և աստեածպաշտութիւնը: Իսկ բանտորութիւնը, չնայած ոստիկանական ամենախիստ ճնշումներին, շարունակում է իր կորիք, և նորից իր տօնին ցոյցեր ու գործադուլներ է անում:

1910—1911 թւականներից յետոյ էղ ցոյցերը դառնում են տեիր հունդուն: Պրոլետարիատը հաւա-քում է իր ոյժերը, գաղտնի աշխատանքներ վերսկր-սում և վերակենդանացնում կուսակցութիւնը: 1912 թւի գալրանը էինուկու 400 բանտորների պնդականա-րումն է տեղի ունենում: Էս բանտութիւնը Ռուսաստանի բանտորութիւնը գրանդիս գործադուլների մի մեծ շարա-

նով պատասխաննեց: Մի քանի օրից յետոյ, միայն Պետրովը ազում Մայիսի մէկի տօնին մասնակից էղան 100 հազարից աւելի մարդկեց: Բազաքի շատ մասերում կարմիր դրօշակներով մանիքեստացիաներ տեղի ու-նեցան:

Նման գործադուլներ եղան նաև Կիևում, Խար-կովում, Օդեսայում, Մարտոնովում, Զոմելում և մի շարք ուրիշ քաղաքներում: Էղ թւականին՝ Լենովու գեղքերի ժամանակ և Մայիսի մէկին, Ռուսաստանում ընդամենը 570 հազար բանտորներ գործադուլ արին (թիւը վերցւած է պաշտօնական ոչ լրիւ աղբերից):

Էղ 1912 թւականը մեծ փոփոխութիւնների թւ-ւական էր: Դրանից յետոյ բանտորական շարժումը Ռուսաստանում մեծ յաջողութիւններ ունեցաւ: 1912 թւի գալրանից (Ապրիլ) մինչև 1913 թւի գալրանը միմիայն քաղաքական գործադուլներին մասնակից է եղել 1,290 հազար մարդ:

Պարզ էր արգելն, որ ուսուական պրոլետարիատի յեղափոխական հոսանքը նորից զարկ ստացաւ և վե-րակենդանացաւ: Բանտորութիւնը ազատութեան հա-մար պատրաստ էր անողոք պայքար մղելու:

1913 թւի Մայիսի մէկը էլ տեիր յաջողութեամբ տօնւեց: Միայն Պետերբուրգում 250 հազար բանտոր գործադուլ արին: Փողցներում ցոյցեր և ոստիկանու-թեան դէմ ընդհարումներ տեղի ունեցան: Ամբողջ Ռուսաստանի բանտորական շրջաններում Մայիսի մէ-կը իր արձականքն ունեցաւ:

Պատերազմի սկզբին՝ երբ համաշխարհային իմ-պերիալիզմը տեսակորչն արիւնալից սպանվանոցի պատ-րաստութիւններ էր ահսնում, ուսուական պրոլե-տարիատը նոյն միաբանութեամբ և սիրով տօնում էր աշխատաւորների եղբայրութեան ու միութեան միջ-ազգային տօնը: Յետագայ տարիներին պատերազմը և

ոէակցիայի անտանելի լուծը խանգարեցին բանւորութեանն իր տօնը կատարելու:

Ակաւեցին աշխարհը արիւնով ներկող ծանր տարիները: Եւ ահա էդ զժւարին ժամանակաշըրջանում, նոյնիսկ սոցիալիզմի պաշտպաններն ու բանւորական շարժումները գեկավարող կուսակցութեանները, պատմութեան կողմից նրանց վրայ զրւած պարտականութիւնների բարձրութեան վրայ չկանգնեցին:

### 3. Ո Ինեւնացիոնալի կազմակերպումը

Մայիսի մէկը բանւորական և սոցիալիստական շարժման պատմութեան ընթացքում զարձաւ պառկետարիատի միջազգային միութեան ու եղբայրութեան մի սիմվոլ: Բայց էլ ինչ եղբայրական միութեան մասին կարող էր խօսք լինել մի պատերազմի ժամանակ, երբ Գերմանիայի սոցիալ-պատրիոտները օրհնում էին ու ազօթում, որ գերմանական պրոլետարիատը յաջող կույտ մղի ֆրանսիական բանւորների դէմ: Երբ անգլիական կեղծ-սոցիալիստները կոչ էին անում Գերմանիան աշխարհիս երեսից վերացնել, բնաջինջ տնել երբ բոլոր երկրների բանւորները դուլս էին բերւած դէմ առ դէմ իրեւուներիմ թշնամիներ:

Աշխատաւորութեան միջազգային եղբայրութեան տօնը կատարելու համար ամենից առաջ պէտք էր պատերազմը գտարեցնել, կապիտալիզմը տապալել ու իշխանութիւնը գրաւել: Սրա փոխարէն սոցիալիստների մէծ մասը բուրժուական հայրենիքը պաշտպանելու ուղին բռնեց, այսինքն իր հայրենիքի բուրժուազիային պաշտպանեց: Դրա համար նաև նկատեց միլիոնաւոր պրոլետարներ մղել դէպի արիւնու սպանդանոց, նըրանց գրգռել ու թշնամացնել միւս երկրների բան-

ւորների դէմ: Հենց էն մարդիկ, որոնք տասնեակ տարիներ կոչ էին անում պրոլետարիատի միջազգային միութիւն կազմել, դաւաճանելով սոցիալիզմի գաղափարներին, սկսեցին օժանդակել եղբայրասպան պատերազմին: Սոցիալ-պատրիոտները սոցիալվոմի գործի խկական սոցիալ-դաւաճանները գարձան:

Մայիսի մէկը միլիստարիզմի և պատերազմի դէմ պայքարելու օր էր: Ել ուրեմն սոցիալ-պատրիոտներն ինչպէս կարող էին տօնել էդ օրը, երբ հենց իրենք պատերազմին աջակցում էին: Նրանք պատերազմական վարկերի օգտին ձայն տւին և իրենց բուրժուազիային անսահման միջոցներ ու դրամներ հայթայթեցին: Նրանք անողոք պատերազմի «մինչև յաղթական վախճանը» հասցնելու համար ավտացիա մղեցին: Նրանք բանւորութեանը խրախուսում, խորհուրդ էին տալիս գործադուներ չանել, իրենց տէրերի հետ ընդհարւել և անխախտ ու առանց պատճառաբանութեան կատարել բուրժուազիայի կամքը: Նրանք օտար եղիլների պրոլետարիատին ոչ թէ ձեռք մեկնեցին, այլ իրենց բուրժուազիայի հետ միացած նրա դէմ դուրս կան:

Նախկին սոցիալիստների մեծամասնութիւնը, որն առաջ միլիստարիզմի և կուների դէմ էր դուրս գալիս, համաշխարհային պատերազմի ընթացքում հանդէս եկաւ իրեւ բուրժուազիայի հաւատարիմ պաշտպան և առնեն կերպ աջակցեց նրա պատրիոտիկ էնթուսիազմի զարգացմանն ու պատերազմական ձգտումներին: Էսպէս, նրանք ոտքի տակ տւին պրոլետարիատի միջազգային համերաշխութեան գաղափարը, և միլիստարիզմի ու իմպերիալիզմի ամենահսկուն պաշտպանները գարձան:

Մայիսի 1-ին համաշխարհային բանւորութիւնը պահանջում էր ութժամկայ բանւորական օր: Իսկ

սոցիալ-համաձայնականները, պատերազմի ժամանակ, բանւորական օրւայ երկարացման, յաւելով ու գիշերւայ աշխատանքների իրագործման համար կոին էին մղում: ԶԵ որ բուրժուազիային վառող, թնդանոթ, ուերօսլաններ և սուզանաւեր էին պէտք: Աւատի նա աշխատում էր, որքան կարելի է էլ աւելի երկարացնել պշխատանքի ժամանակամիջոցը, որպէսզի արտադրութիւնն ու պատերազմական օգուտները բազմանան: Սոցիալ-պատրիտները աջակցում էին բուրժուազիային էլ նպատակներին համելու համար:

Բոլոր երկրներում բանւորների աշխատանքի օրը երկարեց և նըսանց զրութիւնը շատ խիստ ծանրացաւ: Պատերազմական պիտոյքներ արտադրող գործարանների մեծամասնութեան մէջ զիշեր ու ցերեկ անդադար աշխատանքներ էին կատարւում: Շարաթնօրեայ և կիրակնօրեայ հանդիսացը զիշեթէ վերացւած էր: Գիշերւայ աշխատանքը սովորական ընոյթ ստացաւ: Պրոլետարիատի բանւորական օրւայ կրծատման համար մղւած կուրը ի զերե եղաւ: Հիմնելով պատերազմական անհրաժեշտ պէտքերի, հայրենիքի պաշտպանութեան և այլն նման պատճառաբանութիւնների վրայ, բուրժուազիան բանւորներից խլեց աշխատանքի կարճ օրը և նըսանց տառնեակ տարիները տուած զոյտութիւն ունեցող պայմանների մէջ զրեց:

Մայիսի մէկը յանուն սոցիալիզմի վերջնական յաղթանակի մղւող կուր օր էր: Մայիսի մէկին բանւորները առաջարկած լոգունզներով փողոց էին գուրս կալիս իրենց ճնշողների գէմ անհաշտ գասակարգային սլայքար մղելու համար: Պատերազմի ժամանակ շատ շատերը մոռացութեան տեխն նաև էս յիշափոխական ուժաւար: Սոցիալ-գաւանանները բացարձակումէն սկսեցին բանւոր դասակարգի յեղափոխական կաղմակիրպութիւն լինելուց: Բանւորական շարժումը կարող էր յաջողութեամբ առաջ ընթանալ միմիայն էն-

հաշուել: Նրանք բուրժուազիայի հետ խաղաղաթիւն ու բարեկամութիւն հաստատեցին և օսար երկրների պլութօտրիատին պատերազմ յայտարարեցին: Սոցիալ-պատրիտները բուրժուազիայի հետ միասին կառավարութիւն կազմեցին: Նրանք սկսեցին կոչ անել բանւորներին «քաղաքացիական խաղաղութիւն» պաշտպանել: այսինքն կապիտալիստների հետ համաձայնութեան գալու համար առաջարկում էին մոռանալ պրոլետարիատի շահերը, սկսեցին բանւորներին հաւատացնելու որ պատերազմի ժամանակ դասակարգային կուի մասին խօսք լինել չի կարող, որ այժմ «թշնամին մօտ է», «հայրենիքը վտանգի մէջ է» և որ բուրժուազի է միտնան արտաքին թշնամուն յաղթելու համար.—էսպէս՝ փօխանակ բուրժուազի դէմ կոին մղելու, նրանք համաձայնեցման քարոզ էին կարում:

Սոցիալ-համաձայնականները ուախ տակ տւին, ցերին հաւասարեցին նախկինում Մայիսի մէկի առթիւ առուջաղբւած լողանզները: Այլևս բանւորական տօն կատարելու միտքը բարձի թող արւելց: Ի՞նչ տօնի մասին կարող էր խօսք լինել էն ժամանակ, երբ պրոլետարիատը եղայրասպան կուի հետեւանգով արիւնի մէջ էր լողում:

Իսկ ի նշան մէջազգային համերաշխութեան Մայիսի մէկը տօնել հրահանգող ՌԴ ինտերնացիոնալը համաշխարհային պատերազմի շրջանում մնանկացաւ ու կազմալութեց: Պատճական ցաւոտ փորձը ցոյց տւեց, որ էլ ինտերնացիոնալին մասնակցող սոցիալիստական կուսակցութիւնների մեծամասնութիւնը դադարեց: բանւոր դասակարգի յեղափոխական կաղմակիրպութիւն լինելուց: Բանւորական շարժումը կարող էր յաջողութեամբ առաջ ընթանալ միմիայն էն-

ժամանակ՝ երբ անցեալի ժառանգութիւնը կը վերացւէք: Հին մորթին պէտք էր վայր ձգել: Խարխըլած շէնքը անհրաժեշտ էր քանդել: Բանւոր զառակարգի դաւաճաններին պէտք էր գուրս վանել:

Պէտք էր գես հենց բանւորութեան մէջ յերաշը ջուռ կատարել, որպէսզի յևոյ կարելի լինէք միացեալ ոյժերով, պատերազմի աղեղցութեամբ գօրեզացած իմպերիալիզմի ամրութիւնները գրոհի հնթարկել:

#### 4. Ռուսական յեղափոխութիւնը

Լենինն ու ռուսական բոլշևիկները միջազգային բանւորական շարժման էն փոքրաթիւ գործիչներիցն են, որոնք պատերազմի հենց սկզբից խիստ բացասական վերաբերմունք ունեին դէպի «հայրենիքի պաշտպանութիւն», «քաղաքացիական խաղաղութիւն» և այլ նման գաղափարները: Դեռ 1904 թւի աշնանը, Լենինը, կարծես մարդարկանալով, առաջազրեց մի շարք թէզեր, որոնք ճշտութեամբ բնութագրում են համաշխարհային դէպքերի բնթացքը: Նա զրանցով պրոլետարիատին կոչ էր անում անողոք դասակարգացին ուսույար մղել և առաջարկում էր միջազգային պատերազմը վերածել քուրժուալիտի դէմ մղելիք պատերազմի: Դրա միջոցով է, որ պիտի սկսէր համաշխարհային սոցիալիստական յեղափոխութիւնը:

Բոլշևիկների ջերմ մասնակցութեամբ հրաւիրեց երկու միջազգային սոցիալիստական համագումար, մէկը՝ Ցիմերվալդում, միւսը՝ Կինտալում, որտեղ, յանուն պրոլետարիատի միջազգային սերտ միութեան և յանուն սոցիալիզմի յաղթանակի, համաշխարհային պատերազմի դէմ կուելու: համար սոցիալիստները միացան:

Եղ խորհրդակցութիւններին մասնակցող ամենաշտափաւոր անդամների համար էլ միամիգամայն պարզ էր, որ Ա Ինտերնացիոնալը վերջնականապէս անանկացել է և որ պէտք է սոցիալ-շովիմիստների, բանւոր զառակարգի գաւաճանների հետ բոլոր կապերը խղել: Եղ համագումարներից յետոյ բոլոր երկրներում, պրոլետարիատի կողմից իշխանութիւնը գրաւելու համար, յեղափոխական սոցիալիստների աշխատանքները կըրկնապատկեցին ու ուժեղացան:

Ես պայցքարը գկալի թափ ստացաւ ուստական ոչ թէ Փետրվարեան, այլ Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ:

Փետրվարեան յեղափոխութիւնն ու ցարական միավետառների անկումը, հակառակ շատերի սկզբանին առաջանաւ: Փետրվարեան յեղափոխութիւնը թէկ ցարիզմը տապալեց, բայց իշխանութիւնը սկզբում յանձնեց իմպերիալիստական բէակցիոն բուրժուազիային, ապա սոցեալ-ու արիոտներին:

Եղ յեղաշրջումը միմիայն Ռուսաստանը մօտեցրեց Արևմտեան Եւրոպային, բայց եւրոպական պրոլետարիատին ոչ մի նոր ճանապարհ ցոյց ըլ առեց: Սոցիալ-համաձայնականները կոչ էին անում պատերազմը շաբունակել, նորից յարձակումներ սկսել: Նրանք սրանով միջազգային իմպերալիզմի պատերազմական քաղաքականութիւնը հիմնաւորում, ամրապնդում էին և նոր թէ ու թիկունք էին տալիս եւրոպական սոցիալ-շովիմիստներին:

Հոկտեմբերեան յեղափոխութիւնը մէկէն գրութիւնը փոխեց: Նա նոյնիսկ կոյրերին ցոյց տվեց, որ էս անգում արդէն հարւածն ուղղւած է իմպերալիզմի որտին:

Ռուսական բանւորութիւնը, բանակի ու գիւղա-

2002  
29/5/02

ցիսութեան աջակցութեամբ, վճռականապէս կարեց բուրժուազիայի հետ ունացած իր կապերը և ամբողջ իշխանութիւնը իր ձեռքն առաւ:

Նա ցոյց առեց, որ պրոլետարեան, իր գիշտաւատուրան հաստատելուց յետոյ աւելի մեծ եռանդով երկիրը սոցիալիստական վերակազման կը ենթարկի:

Բանւորապիւլացիական իշխանութեան ամբողջ դրժունիւթիւնը միաժամանակ սոցիալիստական յիշափոխութեան համոզեցուցիչ մի պրապագանդայ է:

Նա համաօրէն և արտամաբանական հիմունքներով սկսեց իրագործել իր ծրագիրը: Բըեստի գաշնապիքն ու պատերազմի լիկուլացիան, բուրժուազիայի երսուրազրիսցիան, հազերի զրաւումը, արգիճարելութեան ազգայնացումը, ամբողջ իշխանութիւնը Խորհուրդներին յանձնելը—էս բոլորը եւրոպայի բանւորական մասսաների աշխում նոր գրաւիչ հեռանկարներ էին բացում և ոփորում էին նրանց բուրժուազիայի գէմ հասնդուն պայքար մզկիռ համար:

Հոկտեմբերից յնույ միանգամայն պարզեց թէ որքան նօր է ժողովուրդը երբ նա յանուն ինազարութեան և յանուն սոցիալիզմի ուժի է կանգնաւմ: Սոցիալիստն փոխարարելութեան, պետութեան ու արնականութեան վերականգնման և պատերազմի բոլոր խընդիրներն այժմ շատ սուբ ու պարզ ձևակերպումն էին ստացել: Աշխարհիս բանւորութեան առջև հանդէս եկան նոր լողունզներ և նոր յեղափոխական տակտիկայ:

Էս պատճառով էլ Հոկտեմբերեան յեղափախութիւնն ու պրոլետարիատի կողմից իշխանութեան գրաւումը, պատերազմից հիւծած և բուրժուական բռնութիւնից ճգնած եւրոպական բանւորութեան մէջ կենդանի արձականք գտաւ:

1918 թւի յունարին Խորհրդացին Ռուսաստանը

տեսու արկմաեան Եւրոպայի վրայ ունեցած իր աղղոցութեան առաջին պառզները:

Ֆինլանդական յեղափախութեան հետ միաժամանակ Աւստրօ-Հունգարիայում տեղի ունեցան մեծ զարձագուներ, որից յետոյ նոյնիսկ Բանւորական Ներկայացուցիչների Խորհրդագիտակենալու փորձ եղաւ Աւստրիայից գործադույները ծաւալեցին Գիրմանիան Գիրմանական կառավարութիւնը էդ շարժումը խեղդելու համար խիստ միջոցներ ձևանարկեց: Խոկ էդ գեղդի համար միաժամանակ Թրանսիարումն էլ խաղաղ գեղդի համար մեծ ցոյցեր տեղի ունեցան:

Նոյնիսկ համեմատաբար պատերազմից քիչ վատուած չէզոք երկրներն էլ շատ շուտով Ռուսաստանում տեղի ունեցող գեղդերին արձականք տեին: Էսպէս, Շվեյցարիայի ու Նորվեգիայի բանւորական շարժումները, Խոպանիայի և Պորտուգալիայի խիստ գործադույները, Շվեյցարիայի ու Հոլլանդիայի պարենաւորման առթիւդուածքները ամբողջ 1918 թւականի ընթացքում չդադարեցին:

Նոյնիսկ արևելեան զանազան երկրները՝ ինչողիսիք են Հնդկաստանը, Հարաւային Չինաստանը և մասսամբ էլ եավանիան, Խորհրդացին Ռուսաստարի աղղոցութեան տակ ըսկան: Հնդկաստանում հզող աղղոցիական աղմինիստրացիան սկսեց ամբողջ Արևելքին սղանացող «Ռուսական վարակի» տոթիւ ողմուկ բարձրացնել:

Համաշխարհացին խմբերի վելիզմից ճնշւած բոլոր աղղութիւնները Խորհրդացին Ռուսաստանին նայում էին իրեւ իրենց պաշտպանին ու պատարարին:

Իմպերիալիստական կառավարութիւնները հաւատացած էին, որ ուստական պրոլետարիատի յաղթատացած էին, որ ուստական պրոլետարիատի յաղթատացած էին, որ բուրժուական, կարող է պատահել նոյնիսկ միապիտութիւնը

նորից գրաւի իր հին տեղը: Բայց նրանց էս իդեռը չկատարեցին և 1918 թվի ամսանը դաշնակիցները որոշեցին Խորհրդային Ռուսաստանի դէմ ուղղել իրենց բանակը: Արեւելքից, Հիւսիսից և Հարաւից դաշնակիցների գորքերը ներս խուժեցին բանտորապիւղացիական հանրապետութեան սահմանները:

Էս զինւորական միջամտութիւնը միմիայն Եւրոպայի պրոլետարիատի վէպի Խորհրդային Ռուսաստանն ունիցած համակրանքին զարկ աւեց: Բոլոր երկրների սոցիալիստները սկսեցին դաշնակից գորքերը Ռուսաստանից յետ քաշելու առթիւ ագիտացիա մզել: Էդ ժամանակամիջոցում բոլշևիզմի գաղափարները շատ շուտով տարածեցին ամբողջ աշխարհում: Բուրժուազիան սկսեց «Համտշխարհային բոլշևիզմի» յաջողութիւնից ամբողջ աշխարհին (այսինքն կապիտալիզմին) սպաննացող վաճանդի մասին մասմել և այլուկ բարձրացնել: Բոլոր կառավարութիւններն աշխատում էին իրենց երկիրը Ռուսաստանից առանձնացել որպէսպի էնտեղից ճշգրիտ տեղեկութիւններ, մանաւանդ լրացրեներ, զիկրեաներ (հրամաններ) ու ուրիշ նիւթեր չսառցեն, որոնցով կը հաստատելու Խորհրդային Իշխանութեան կատարած իսկական սոցիոլիտական աշխատանքները:

Եւսպական բուրժուազիան փորձում էր Ռուսաստանն անանցանելի պարիսպով սահմանափակել: Նա իր մասում միջոցով իրը թէ բոլշևիկների կողմից կատարւած վայրենութիւնների ու զագանութիւնների մասին բանրասանք ու կիզծ լուրեր էր տարածում:

Էս տեսակ դարշելի միջոցներով բուրժուազիային մասմբ յաջուղեց լայն մասսաների հասկացողութիւնը մթագնել և Ռուսական Յեղափոխութեան ընթացքի ու պատահի մասին ունիցած նրանց երկակայութիւ-

նը աղաւաղել: Բայց դրանով էլ նա չկարողացաւ Եւրոպան «բոլշևիկնեան վարակից» փրկել: Եւրոպական պրոլետարիատն իր դասակարգային բնագլով հասկացաւ ճշմարտութիւնն ու խորը համակրանքով վերաբերւեց գէպի ուսւական բանտարութիւնը:

Շատ շուտով նա ևս իշխանութիւնը գրաւելու համար յեղափոխական կուի ուղին բռնեց: Յեղափոխութեան ալիքը սկսեց տարածւել գէպի Եւրոպա:

### 5: Համաշխարհային յեղափոխութիւնը.

Հենց էն ժամանակ, երբ անգլօ - ամերիկական կապիտալը իր գորքերն ուղարկում էր Խորհրդային Ռուսաստանը գրաւելու և բուրժուական իշխանութիւն հաստատելու համար, արևմտեան Եւրոպայի բոլոր երկրներում աշքի է զարնում բանտորական շարժման միանգամայն որոշակի գէպի ձախ թեքումը՝ բուրժուազիայի հետ ունիցած կապերը խսկելու ձբդումը:

Սոցիալ-պատրիոտների ֆրակցիայում նախկին մինիստր Թոման խայտառակ կերպավ նահանջեց. իսկ քաղաքացիական խաղաղութիւնից հրաժարւող և մօտ անցեալում «փոքրամասնութիւն» կազմով մեծամասնութեան վստահութիւնը գրաւեց: Ֆրանսիական սոցիոլիտական հոսանքի ծայրագոյն ձախ թիւը Մերգէյմանի և Լորիօի զիմանը ունենալ:

Իտալիական բանտորական մասսան աւելի գէպի ձախ թեքւեց:

Իտալիական սոցիալիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէն իր մի շարք բանաձեռի միջոցով ոչ միայն սուսական պրոլետարիատին իր ողջացն էր ուղարկում, այլև բոլշևիկեան սովոր միշարք պրակտիկ միջոցներ էր առաջադրում: Նոյն կու-

սակցութեան կոնզըրեսն էլ նման ոդով որոշումներ կայացրեց և իր պարբամենտական քրակցիային, բուժուազիայի առջև սողարու և բանուորական կուսակցութեան սոցիալ-պատրիոտիկ առարկերի հետ կապերը չըխզելու համար, պախարակեց: Սոցիալիստական կաղմակերպութիւնների էս որոշմանը զուգապիտեցին խաղողութիւնն իրագործելու համար եղած բանուորական յախուն շարժումները, որոնք սկսեցին տարածել իտալիայի բոլոր արդիւնարերական տմենամեծ կենտրոններում:

Նոյնիսկ Անգլիայում «քաղաքացիական խաղաղութիւն» լոգունը կրուի հանդիպեց: Բանուորական ըլջաններում աւելի վճռական տակալիկայի հետեւելու մասին հարց բարձրացաւ, առաջարկեց ամբողջ հոգերը և արտադրութեան միջոցները — զրաւել: Նոյնիսկ մի քանի բանուոր լիզերներ (առաջնորդներ), որոնք իրենց հայեացքների ծայրայինութեամբ երրեք աչքի չէին ընկել, յայտարարեցին, որ սոցիալիստական յեղափոխութեան մասին պէտք է մտածել:

Ամերիկայում «հրկի ինդուստրիական բանուրների» բազմաթիւ կազմակերպութիւններ և Դիբոսին յիշելող սոցիալիստական խմբերը բոլշեվիկներ լուսնդներ յայտարարեցին ցոյց տալով գէպի թորհըրդային Ռուսաստանն ունեցած իրենց համակրանքը:

1918 թւի Հոկտեմբերին սուսական յեղափոխութեան սուածին առեղարձն Արևմտական ներուպայի յիշած խմորումներն էլ աւելի խիստ բնոյթ ստացան ու մեծ շափերի հասան: Բոլշեվիկնեան գաղափարները տարածեցին նաև Յուլյարիայում: Ապօտամբւած բանակը, բանուրների ու գիւղացիների աջակցութեամբ, նախ Ֆերգինանդ թագաւորին տպա և Բորիսին դահլյանեց

արաւ և ամբողջ երկրում Բանուորական ու Գիւղացիական Խորհուրդներ կազմակերպեց:

Էս յեղափոխութիւնը կենցըրնական միապետութիւնների անկման սկզբնապատճանն ու խթանը հանգիսացաւ: Աւստրօ-Հունգարիայում էլ ապստամբւած ժողովուրդը արքայական իշխանութեանը վերջ տևեց: Խակ նոյեմբերի սկզբներին յեղափոխութիւնը տարածւեց նաև Գիւրմանսիայում: Վիլհելմն անմիջապէս փախաւ «իր» երկրից: Իշխանութիւնն անցաւ սոցիալ-պատրիստներից ու բուրժուազիայից կազմւած բլոկի ձեռքը:

Էս յեղափոխութիւնը վերջ տևեց պատերազմին: Հաշտութեան առթիւ սկսւեցին բանակցութիւններ:

Բայց և այնպէս հինաւուրց միապետութիւնների անկումը զեռ միմիայն գործի սկիզբն էր: Գրանովսկուարտական պայքարի ճանապարհն էր հարթւում: Իմպերիալիզմի ճանկերից բանուոր զասակարգը տակաւին չէր ազատագրւել: Պրոլետարիատն ունէր զեռ կատարելիք մի զիստուր ինպիր—զա իշխանութեան գրաւելը, բուրժուազիային ամբողջապէս հպատակեցնեն ու սոցիալիզմը իրագործեն էր: Ահա էս ճամբով էր գնում սուսական յեղափոխութիւնը, որը նոյնպէս համաձայնականութեան շրջան է ունեցել ու անցել: Եւրոպայի բանուրութեան առաջ ևս բոլշեվիկնեան լուսնդները գրւած էին իրեն հերթական խնդիրներ:

Եւ ահա հենց էն երկրներում, ուր յեղափոխութիւն էր ծագել սկսւում է ներքին պայքար, մի կողմը պրոլետարիատն է կանգնում, իսկ միւս կողմը՝ բուրժուազիան ու սրա պաշտպան սոցիալ-պատրիստները:

Գիւրմանական ձախ սոցիալիստները՝ նպարտակեանները, Լիբէնսկուտի, Մերինգի, Ռոզտ Լիւքսեմբուրգի գեկավարութեամբ անմիջապէս ընդունեցին բոլշ-

սիկների ծրագիրն ու իրենց կուսակցութիւնը կոմմունիստական յայտարարեցին: Նրանք գիտակցում էին, որ միմիայն պրոլետարիատի իշխանութիւն հաստատելով է, որ կիրականացնի սոցիալիզմը:

Գերմանական բանուորական մասսաները ձգտում էին բուրժուազիայի դէմ կոփու մզել: 1919 թ. յունապրին առաջին անգամ սպարտակները փորձեցին իշխանութիւնը գրաւել:

Սոցիալ-դաւաճանների կառավարութիւնը էզ շարժման դէմ զուրս գալու համար, անմիջապէս բուրժուազիայի բոլոր սյժերը մորիլիզացիայի հնթարկեց: Նու հարուստների զուտակներից, ուսանողներից ու սպոնսերից սպիտակ գւարդիական կամաւորսկան խմբիր կազմակերպեց և բանուորական ապաստամբութիւնը ձբնաց: Սպարտակների առաջնորդներ՝ Լիբկնիստն ու Լիբչիսմբուրգը զաւածանորին սպանացին:

Եկեղեցմանը, նոսկէն, երեխար և միւս սրանց նման դաւաճանները հրճում էին իրենց յաղթութեամբ: Աւինների տակ նրանք ձևականորէն Սահմանադիր ժողով հրաւիրեցին, որը իշխանութիւնը նարից յանձնեց բուրժուազիային ու նրա յիշելովներին:

Բայց հազիւ երկու ամիս էր անցել երբ նորից ապստամբութիւն ծագեց: Կառավարութիւնը մեծ ոյժերով միայն կարողացաւ Բերլինն ապատել ապստամբներից, սակայն շատ քաղաքներ, սրտեղ նա անզօր էր, յեղափոխական խմբումների վայր գարձան:

Սոցիալ-դաւաճանների իշխանութեան ներքոյ ամբողջ երկիրը նմանւում էր եռացող մի պղնձի, որը ամեն մի ըոտէ կարող է պայթել կառավարութիւնը գիտակցում էր, որ իր գրութիւնը մազից է կախւած և որ ինքը գիմանում է միմիայն բուրժուազիայի վարձու ազնունների ու կոպիտ ոյժի շնորհիւ:

1919 թւի մարտին՝ համարիս սպարտակների

երկրորդ ազատամբութեան հետ միաժամանակ, Արեմտեան Եւրապայում աւելի մեծ գէսլքեր տեղի ունեցան: Հունգարիայի բուրժուազիան, տեսնելով երկրի անկախութիւնի վիճակը, իշխանութիւնից հեռացաւ: Կամունիստներն ու ձախ սոցիալիստները նոր կասավարութիւն կազմեցին, որը պարզաբնութը ցըեց, Խորհրդային Հանրապետութիւն յայտարարեց և իր ողջոյնն աղարկեց Խորհրդային Բուռաստանին: Նու վերջնին առաջարկեց միացեալ ոյժերով զուրս գալ համաշխարհային իմպերիալիզմի դէմ:

Յէշեալ նոր Խորհրդային Հանրապետութիւնը հէնց սկզբից Բուռաստանում իրադուած գելիեաններն ու հրամանները սկսեց արձակել. բուրժուազիան ամբողջապէս իշխանութիւնից հեռացւեց և սրբութարիատի գիկտատուրա հաստատեց. ամբողջ իշխանութիւնը Խորհուրդներին յանձնւեց: Կալւածակերերի հոգերը գրաւեցին. արդիւնաբերութիւնը աղգայնացւեց: Դրամատները, (բանկերը) պրոլետարիատի շահներին ծառայեցներու համար, խիստ հսկողութեան տակ առնեցին: Բուրժուազիայից զէնքերը խլեցին, կարմիր բանակ կազմակերպւեց և եկեղեցին զպլոցից անջատման ենթարկւեց:

Հոգենորականութեան ու բուրժուազիայի ձեռքից կուլտուրական կրթութեան զործը խլւեց: Տպարանները, թղթի պահուստներն ու ամբողջ տպագրութիւնը մասսանների զարգացման դործին ծառայեցին:

Բուռաստան յեղափոխութեան գործերն ի նկատի ունենալով, Հունգարիայի ընկերները վատահօրէն սկսեցին երկրում սոցիալիստական կարգեր մատչներ նրանք բացարձակորէն միացան բոլշեվիզմի դրօշակին:

Հունգարական յեղափոխութիւնը պայթող ոռութիւ տպաւորութիւն թողեց Եւրոպայում: Խմբերիալիստ-

Ները շարունակ միսիթարում էին իրենց էն յոյսով, որ բոլցեփմը կը մնայ միմիայն Ռուսաստանի սահմաններում և դէպի եւրոպա չի տարածւի: Հունգարական պրոլետարիատի յաղթութիւնը մէկէն նրանց ծրագիրները խանճոց ու շփոթեցրեց: Կոմմունիզմը հենց Արևմտեան Եւրոպայի կենտրոնում դիրք էր գրաւել: Էստեղից նու չէր կարող չսպառնալ ոչ միայն նախկին Աւստրօ-Հունգարական միապիտութեան սահմաններում գտնուող բոլոր երկրներին, այլև Գիրմանիային, Իտալիային ու Ֆրանսիային: Բոլցեփմի ալիքը հետպհնետէ դէպի գանձակիցների երկիրն էր տարածւում:

Եւ իրօք Հունգարական յեղափոխութիւնը շատ շուտով իրն յետևորդներն ունեցաւ: Էսպէս առըրիլի սկզբին շարունակ բուրժուազիայի ու սոցիալ-համաձայնականների գէմ եւանդուն պայքար մղող բանւօրական պրոլետարիատը Բաւարեան Խորհըրդային հանրապետութեան վերածեց: Դրանից յիսոյ նու սկսեց, Ռուսաստանի և Հունգարիայի օրինակի նման բուրժուական կարգերը արմատապէս փոփոխութեան ենթարկել:

Ոչ մի կասկած չկայ, որ մօտ ապագայում նման յեղաշըզումներ տեղի կունենան եւրոպ. միւս երկիրներումն էլ. և առաջին հերթին Գիրմանիայում: Ամբողջ աշխարհում պրոլետարիատի դիկտատուրա կը հաստատի:

Որքան էլ դէպքերը գանգաղ են աճում, բայց և այնպէս էլի աշխարհիս զանազան մասերից տեղեկութիւններ են ստացւում, թէ ինչպէս յեղափոխական խմբումները հետպհնետէ ծաւալում են: Անգլիական իմպերիալիզմի գէմ կուռում են ոչ միայն էստարւայ սկզբին մեծ գործադուններ կազմակերպող անդիքական բանւօրները, այլև բազմաթիւ գաղութ-

ներ: Զինւած ընդհարութներ են տեղի ունենում Եգիպտոսում, Հնդկաստանում, Հարաւային Աֆրիկայում: Իրլանդիան նոր ապատամբութեան պատրաստութիւնն է տեսնում:

Յեղափոխական շարժումը ֆրանսիայում ու Իտալիայում օրաւուր նոր յաջողութիւններ է ձեռքբերում: Խոպանիայում ու Փորթուգալիայում արինաւլից ընդհարութները չեն զաղարում: Նոյն իսկ «ապահոված» Ամերիկան զդալով, որ պրոլետարիատի ապստամբութիւնն արդէն անխուսափելի է, սկսել է բանւօրների մասսայական ձերբարձրութիւններ կատարել և հաղարաւոր «բոլցեփմիկան պրոպագանդիստների» արտաքսել:

Համաշխարհային յնպափոխութիւնը զարգանում ու ծաւալում է: Սոցիալիզմի թագաւորութիւննը մօաւենում է:

## 6. Երրորդ ինիւնացիոնալը

Հենց համաշխարհային պատերազմի սկզբից սպարգւեց, որ Ռ-ը ինտերնացիոնալը սնանկացել և քայքայել է: Այլևս կասկած չկայ, որ հին կազմով նու չի կարող վերականգնել: Սոցիալ համաձայնողականները էսպէս դաւաճանեցին բանւոր դասակարգին ու սերտօրէն կապւեցին բուրժուազիայի հետ, որ սոցիալիզմի ձախ և աջ թերթի միացման մասին այլևս ոչ մի խօսք լինել չի կարող: Ռուսական ու գիրմանական յեղափոխութիւններն աւելի ցայտուն կերպով ցոյց տիին թէ ինչ մեծ վիճ կայ էլ երկու թերթի մէջ: Հենց էն ժամանակի երրուսաստանի կոմմունիստներն ու Գիրմանիայի սպարտակեանները պրոլետարիատի դիկտատուրայի համար հակայեղափոխութեան գէմ կոիւ էին մղում, սոցիալ-գաւանանները գէնքը ձեռներին բացարձակօրէն հակա-

յեղափոխութիւնն էին պաշտպանում, էսպէս, մեր յայտնի մենշևիկները, աջ ու ձախ էս-էրները կողչակի և դե-նիկենի բանակն էին մտնում: Շեյդէմանը, նոռիկն, էքերտը և գիրմանական միւս սոցիալ-պատրիոտները, բուրժուազիային դուր գալու համար, պրոլետարիատին գնդականարում ու արեան էին մատնում:

Պարզ էր, որ նոր ինտերնացիոնալը կարող էր և պէտք է միացնէր էն յեղափոխական սոցիալիստներին, որոնք յանուն սոցիալիզմի մօտալուս իրականացման, պրոլետարիատի դիկտատորա հաստատելու տեսակե-տի վրայ են կանգնած: Պրոլետարիատի միջագային միութիւնը կիրականանար միայն յանուն յիշւած յեղափոխական լողունգի: Նոր ինտերնացիոնալը միմիայն կոմմոնիստական-բոլշևիկական ինտերնացիո-նալ կարող էր լինել և նա բանուր գասակարգի բոլոր թշնամիներից, ինչ անունով էլ որ դրանք կոչելիս վնեն, միանգումայն պիտի անջատւէր:

1919 թւի մարտին, Ռուսաստանի կոմմունիստա-կան կուսակցութեան կենտրոնատկան կոմիտէի նախա-ձեռնութեամբ, Մասկույում՝ Կրեմլի մէջ տեղի ունե-ցաւ Եւրոպայի կոմմունիստական կուսակցութիւնների ներկայացուցիչների առաջին հիմնադիր համագումարը:

Անասելի տանջանքներից յետոյ համագումարին ներկայացան Գերմանիայի, Աւստրիայի, Ֆրանսիայի, Հունգարիայի, Ռումինիայի, Հուլանդիայի և ուրիշ երկրների ներկայացուցիչները: Կային նաև Ամերիկայի, Անգլիայի, Զինաստանի, Իտալիայի և ուրիշ տեղե-րի սոցիալիստներից:

Երրորդ ինտերնացիոնալի առաջին համագումա-րը իրքի սկզբունք ընդունեց էն բոլոր տեսակէանները, որոնք բոլշևիկների ծրագրի մէջ էին մտնում և մա-սամբ էլ արդէն իրականացւել էին:

Նոր ինտերնացիոնալը վճռականապէս բաժանւեց բուրժուազիայի պոչը կազմող սոցիալ-դեմոկրատիայից և կոմմունիզմի գրոշակի տակ կանգնեց: Նա որոշեց անմիջապէս բուրժուազիային տապակելու համար պայ-քարող աշխարհի բոլոր յեղափոխական կուսակցութիւն-ների միացումով, իր գործունէութիւնը ծաւալել ու գար-գացնել:

Երրորդ ինտերնացիոնալի համագումարը, ընա-կանաբար, սոցիալ-համաձայնականների աշխատան-քը խիստ քննադատութեան և նմթարկեց: Նրանք Բերնում գումարած իրենց կոնգրեսում պարզ կերպով ցոյց տւին թէ ինչպէս իմպերիալիստական պետու-թիւններին դուր գալու համար սողում էն նրանց առ-ջի: Բերնի «գեղին կոնգրեսը» բանւոր զասակարգի կարիքները մոռացութեան տևեց և ամբողջապէս սկսեց պաշտպաննել բուրժուազիային ու աջակցել վերջինիս յաղթւած ժողովրդների հանդէպ վարած քաղաքակա-նութեանը:

Հակառակ սրանց, Երրորդ ինտերնացիոնալի հա-մագումարը շատ պարզ ընդգծեց էն հանգամանքը, որ յանուն պրոլետարեատի դիկտատուրայի պէտք է իմ-պերիալիզմի ու դրա օգնականների դէմ անողոք պայ-քար մղել:

Երրորդ ինտերնացիոնալի կազմակերպումով չոր-սամեայ պատերազմից քայլքայւած ամբողջ աշխարհի միջազգային սերտ կապերի վերականգնման հիմքը դրւեց: Երրորդ ինտերնացիոնալի մանիֆեստը եւրո-պական բանուրների սրտերում արձագանք գտաւ: Հունգարական կոմմունիստական կուսակցութիւնը, սոցիալ-դեմոկրատիայի մի մասի հետ միասին յարեց կոմմունիստական ինտերնացիոնալին: Իտալական Սո-ցիալիստական կուսակցութիւնը, սոցիալ գաւաճաննե-

բից պաշտօնապէս կորելով իր կապերը, ամբողջապէս անցաւ նոր հնաերնացինալի կողքը: Նոյնիսկ Անզիլայում Կոմմոնխոտոկան կուսակցութեան ընթերներ կազմակերպւեցին: Դրանք բոլցերկեան ծրագիրն ամբողջովին ընդունեցին:

Մօտ սպագայում երրորդ Կոմմոնխոտոկան հնատերնացինալը Երողայի, Ամերիկայի և ուրիշ երկրների քանուրութեան բոլոր յեղափոխական ոյժերը իր շուրջը կը համախմբի և միջազգային պրոլետարիատի խոկական համերաշխութեան առաջ բերելու համար հզօր միութիւն կը ստեղծի: Բուրժուազիայի և իմպերիալիզմի դէմ մղելիք կուի ընթացքում էդ համերաշխութիւնն աւելի կամրապնդի:

Ի նկատի ունենալով բուրժուազիայի շարքերում գոյութիւն ունեցող անհամաձայնութիւնները, վէճերն ու պանիկան այլևս ոչ մի կասկած չի մնում, որ քանուրուր զատակարգի յեղափոխական պայքարը յաջողութեամբ կը պատկի: Մօտ անցեալում իրար գաշնակից սկսութիւններն այժմ համաձայնութեան չեն դալիս և չեն կարգանում աւարը բաժանել: Նրանք հիմա իրար են սպանում, նոր պատերազմների պատրաստութիւն են անհում: Սշխատում են մէկը միւսին խարել ուժառապատ անել: Նոյնիսկ պրոլետարական յեղափոխութեան սպանացող վտանգն էլ նրանց այլևս չի հաշտեցնում:

Որքան քանուրութիւնն ուժգին յարձակում գործի կալիստալիստական իրաւակարգի ամբութեանց վրայ, նոյնքան բուրժուազիայի շարքերում ատառաձայնութիւններն ու վէճերը կաճեն, կը բազմանան: Որքան ամրանում է սոցիալիզմի շնչքը, որի կերտուրը այժմ մնա դժւարութիւնների հետ կատ ունի, նոյնու այժմ մնա դժւարութիւնների հետ կատ ունի, նոյնու առելի կուպիտալիստական տաճարը դիմում ու խարխում է:

Յեղափոխական բանւորների միջազգային միութիւնը պրոլետարիատի վերջնական յաղթութեան գրաւականն է:

### 7. Մայիսի մէկի լոգունգիները

Էս տարի մէնք մայիսի մէկը բացառիկ պայմանաբերում ենք տօնում: Համաշխարհային յեղափոխութիւնը զարգանում և ծաւալում է: Բանւոր դասակարգը բոլցերկեան լոգունգների շուրջը համախմբւելով սոցիալիստական գաղափարներն իրագործելու համար վճռական կոփւ է մզում: Մի քանի երկրներում նուարդէն յաղթանակել է:

Համաշխարհային պրոլետարիատն էս անգամ առանձնայառուկ զգացմունքով պիտի տօնի միջազգային էս տօնը:

Նա էդ օրը կը վերցի պրոլետարիատի գործի համար ընկած հերոսներին, սոցիալ-դաւաճանների ձեռքով նահատակւածներին, յեղափոխութեան բնթացքում սպանւածներին, բուրժուական կատավարութեան կամ միապետութեան կողմից չարչարւածներին: Պրոլետարիատը սոցիալիզմի համար զննւածներին կը զբրւատի:

Նախկին «ութժամեայ բանւորտական օր»-ը լոգունգի փնխարէն պրոլետարիատն այժմ պահանջ էր դնի հողերը գրաւել, արդիւնաբերութիւնը համայնշներ առեստուրն ազգայնացնել ու էդ ճանապարհով բոլոր երկրներում սոցիալիզմն իրականացնել:

«Միլիտարիզմի դէմ կոփւ» լոգունգի փոխարէն պրոլետարիատը կառաջազրի բնւրժուազիայի ամբողջ իշխանութիւնը տապալել և պրոլետարիատի դիկտատուրա հաստատել լոգունգները, որոնց իրականացման միջոցով միայն կարելի է պատերազմին ու ժողովրդների մէջ եղած թշնամանքին վերջ տալ:

Իսկ պրոլետարիատի գիկտասուրան ամենից յաշող կիրականանայ Խորհուրդների միջոցով։ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւն—ահա էն պետական ձեզ, որից, սոցիալիզմի համար մզած կուի ընթացքում, համաշխարհային պլառեանարիատը կօդուի։

Եթէ մինչև այժմ միայն Մայիսի մէկին և հազարգէպ կոնգրեսների ժամանակ էր միջազգային պրոլետարիատը համախմբուում ու միանում, հիմա նա միանգամ ընդմիշտ ազատութեան կուի համար՝ կը միացնի իւր բարոր ոյժերը։ Նա կաշխատի, և արգէն ջանում է, աշխարհի բարոր աշխատաւորների իսկական միութիւն առաջ ընթիւ։

Հենց որ նորուան, խորհրդային հանրապետութիւնների ցանցով կը պառի անմիջապէս զրանցքց միութիւն ստեղծելու անհրաժեշտութիւնը կը զգացւի։ Պրոլետարիատը կը ստեղծի Միջազգային Խորհրդային Հանրապետութիւն, որն ամբողջ աշխարհում սոցիալիզմ իրականացնելու զեկավարութիւնն իր ձեռքը կտռնի։

Բանւոր գանակարգը իմպերիալիզմի դէմ կուելիս շատ ծանր փորձանքներ պիտի կրի. բայց կառկած չըկայի որ նա արագ զիմում է դէպի վերջնական յակըութիւն և որն անշուշտ կիրականանայ։

Եւ եթէ այսօր Մայիսի մէկը մենք տօնում ենք յանուն գառակարգային կուի, շատ տարի չանցած միջազգային պրոլետարիատի էս տօնը կը կատարի յանուն բանուոր գառակարգի տարած լիակատար յակըութեան։ Արդէն մօտ է ժամը, երբ Մայիսի մէկը կը լինի ամբողջ երկրագնդի վրայ հաստատւած սոցիալիզմի թագաւորութեան հանդիսակատարութեան օսոր։

331.91  
Կ-45

2013



II